Որո՞նք են իմ իրավունքները որպես հանցագործության զոհ

Ոչ ոք պատրաստված չէ հանցագործության զոհ դառնալուն: Միևնույնն է՝ ինչ հանցագործություն: Լինի դա գրպանահատություն, ծանր մարմնական վնասվածք, թե մեկ այլ հանցանք: Հանցանքի պատճառով կարող են վնասներ կամ խանգարումներ առաջանալ, որից հետո մարդիկ հաճախ չգիտեն ինչ անել: Այս հուշաթերթիկը նախնական ակնարկ է այն մասին, թե նման իրավիճակներում որտեղ կարող եք աջակցություն ստանալ և ինչպիսի իրավունքներ ունեք:

Ո՞վ կարող է ինձ օգնել:

Զոհերի աջակցության կենտրոններն առաջարկում են խորհրդատվություն և աջակցություն: Խորհրդատվական կենտրոններում աշխատում են հատուկ մասնագիտացված անձինք, որոնք մեծ փորձ ունեն նման իրավիճակում գտնվող մարդկանց հետ և ուզում են Ձեզ լսել և աջակցել: Նրանք կարող են նաև միջնորդել, որ Դուք, ըստ անհրաժեշտության, ավելի ընդլայնված օժանդակություններ ստանաք, ինչպես օրինակ՝ հոգեբանական կամ թերապևտիկ աջակցություն:

Ակնարկ այն մասին, թե ում կարող եք դիմել, կգտնեք սույն կայքում՝ www.hilfe-info.de

Բնականաբար այդ մասին կարող եք հարցնել նաև յուրաքանչյուր ոստիկանական բաժնում:

Ինչպե՞ս կարող եմ հանցագործության մասին հաղորդում և դիմում ներկայացնել և ի՞նչ տեղի կունենա դրանից հետո:

Եթե ուզում եք որևէ հանցագործության մասին հաղորդում ներկայացնել, ապա կարող եք դիմել յուրաքանչյուր ոստիկանական բաժին: Հանցագործության մասին հաղորդումը կարող եք ներկայացնել նաև դատախազությանը: Եթե ներկայացրել եք հաղորդում հանցագործության մասին, ապա չեք կարող այն այլևս հեշտությամբ հետ վերցնել, քանի որ հետաքննող վարչությունները (ոստիկանությունն ու դատախազությունը) պարտավոր են քննել յուրաքանչյուր հողորդված հանցագործություն:

Մայն մի քանի ոչ ծանր հանցագործությունների դեպքում, ինչպիսիք են օրինակ՝ վիրավորանքը կամ գույքի վնասումը, տուժողը կարող է ինքը որոշել, հանցանքը քրեորեն հետապնդվի, թե ոչ: Այդ իսկ պատճառով, այս հանցանքները կոչվում են նաև հայցային վարույթի հանցանքներ: Այս պարագայում հանցագործությունը հետապնդվում է, որպես կանոն, միայն ըստ հայցի, այսինքն եթե Դուք, որպես հանցագործության զոհ, հստակ ցանկանում եք դա: Այդ հայցը պետք է ներկայացնել հանցագործության և հանցագործի մասին տեղեկանալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում:

Իսկ եթե ես վատ եմ հասկանո՞ւմ կամ չեմ հասկանո՞ւմ գերմաներեն:

Դա հոգ չէ: Եթե ուզում եք հանցագործության մասին դիմում ներկայացնել, ապա Ձեզ կօգնեն: Եթե Ձեզ հարցաքննում են, որպես վկա, ապա իրավունք ունեք պահանջել, որ ներգրավվի թարգմանիչ: Եթե Դուք ուզում եք ստանալ տեղեկություններ, բայց բավարար չափով գերմաներեն չեք հասկանում, կարող եք դիմում ներկայացնել, որ այդ տեղեկությունը Ձեզ ներկայացնեն Ձեզ հասկանալի լեզվով:

Ի՞նչ տեղեկություններ կարող եմ ստանալ քրեական գործի ընթացքի մասին:

Եթե Դուք որևէ հանցագործության զոհ եք դարձել, ապա կրող եք տեղեկություններ ստանալ քրեական վարույթի ընթացքի և գործի մասին: Ոստիկանությունում՝ լավ կլինի անմիջապես հայտնեք, արդյոք՝ և ինչպիսի տեղեկություններ եք ուզում ստանալ:

Դուք հնարավորություն ունեք ստանալ հետևյալ տեղեկությունները՝

- Դուք կստանաք գրավոր կարճ հաստատում, Ձեր ներկայացրած հանցագործության հաղորդման մասին

- Ձեզ կտեղեկացնեն, եթե դատախազությունը կարճի գործի վարույթը, այսինքն՝ դատարան մեղադրանք չներկայացնի դատական հետապնդման համար:

- Ձեզ կտեղեկացնեն, թե երբ և որտեղ տեղի կունենա դատավարությունը և ինչ մեղադրանք է ներկայացվել ամբաստանյալին:

- Ձեզ կտեղեկացնեն դատական նիստի արդյունքների մասին, այսինքն՝ արդյոք ազատ արձակման, կամ դատապարտման մասին դատավճիռ է ընդունվել, կամ արդյոք գործի վարույթը կասեցվել է:

- Ձեզ կտեղեկացնեն այն մասին, արդյոք ամբաստանյալը կամ դատապարտյալը գտնվում է ազատազրկման մեջ: Այդ թվում նաև՝ եթե վերջինս բանտից արձակուրդ ուղարկվի կամ այնտեղից փախչի:

- Ձեզ կտեղեկացնեն այն մասին, արդյոք դատապարտյալին արգելել են Ձեզ հետ կապ հաստատել:

Առանձին դեպքերում՝ կարող եք գործի նյութերից տեղեկություններ կամ պատճեններ ստանալու մասին լրացուցիչ դիմում ներկայացնել: Այն կարող է ճանապարհաերթևեկային վթարից հետո, օրինակ՝ վթարի էսքիզը լինել, որը Ձեզ պետք է վնասի փոխհատուցում կամ զոհի հատուցում պահանջելու համար: Եթե Դուք իրավունք չունեք համահայց ներկայացնելու, (համահայցի մասին կարդացեք ներքևում՝ 7-րդ էջում) ապա պետք է հիմնավորեք, այսինքն բացատրեք, թե գործի

մասին այդ տեղեկությունները ինչի համար եք ուզում: Առանձին դեպքերում կարող են բացառություններ արվել:

Ձեր ցուցմունքները, որպես վկա:

Որպես հանցագործության զոհ, Դուք նաև հանդիսանում եք վկա, և այդ իսկ պատճառով շատ կարևոր անձ եք հետաքննության համար: Վկայի ամենակարևոր առաջադրանքը կայանում է նրանում, որ նա ամբողջական և ճշմարտացի վկայություն տա: Եթե Դուք ունեք փաստաթղթեր, ինչպիսիք են օրինակ՝ տեղեկանքներ, լուսանկարներ, ապա քննչական մարմինների համար շատ օգտակար կլինի, եթե Դուք դրանք Ձեզ հետ բերեք հարցաքննությանը: Որպես կանոն՝ Դուք Ձեր ցուցմունքները տալիս եք ոստիկանությունում: Շատ դեպքերում Դուք հետագայում պետք է ցուցմունք տաք նաև դատարանում: Միայն բացառիկ դեպքերում, եթե օրինակ՝ Դուք մեղադրյալի հետ ամուսնացած կամ մոտ ազգական եք, իրավունք ունեք հրաժարվելու ցուցմունքներ տալուց, այսինքն պարտավոր չեք ոչինչ ասել:

Սակայն պարտավոր եք հարցաքննության ժամանակ հայտնել Ձեր անունը, ազգանունը և հասցեն: Բացառություն կարող է արվել միայն այն դեպքում, եթե առկա է հատուկ վտանգի ռիսկ: Դա կարող է լինել օրինակ՝ այն դեպքում, եթե ինչ-որ մեկը Ձեզ բռնությամբ է սպառնացել, որովհետև Դուք ուզում եք ցուցմունք տալ: Այդ դեպքում Դուք պարտավոր չեք հայտնել Ձեր անձնական հասցեն: Դրա փոխարեն Դուք կարող եք հայտնել մեկ այլ հասցե, որով կարող են կապ հաստատել Ձեզ հետ: Դա կարող է լինել օրինակ՝ զոհերի աջակցության կենտրոնի հասցեն, որի հետ Դուք կապ ունեք: Դատարանում ցուցմուքներ տալու ժամանակ, եթե ամբաստանյալը կամ մեղադրյալը գտնվում է դատարանի դահլիճում, ապա Ձեզ կհարցնեն ոչ թե Ձեր ամբողջական հասցեն, այլ միայն Ձեր բնակավայրի անունը: Եթե առկա է վտանգ, ինչպես վերոհիշյալ դեպքերում, ապա Դուք նույնիսկ Ձեր բնակավայրի անունը պարտավոր չեք հայտնել:

Որպես վկա ցուցմունք տալը Ձեզ համար անկասկած արտակարգ իրավիճակ է, որը կարող է շատ սթրեսային լինել: Այդ իսկ պատճառով կարող եք Ձեզ հետ բերել ինչ-որ մեկին: Դա կարող է լինել Ձեր բարեկամներից կամ ընկերներից որևէ մեկը: Նա կարող է հարցաքննության ժամանակ ներկա գտնվել և միայն բացառիկ դեպքերում կարող են նրան հեռացնել դահլիճից: Իհարկե Ձեզ կարող է ուղեկցել նաև փաստաբան: Հատուկ դեպքերում՝ հարցաքննության ընթացքում Ձեզ նույնիսկ կարող է պետության հաշվին փաստաբան տրամադրվել: Եթե կարծում եք, որ հարցաքննության համար՝ լինի դա ոստիկանությունում, դատախազությունում, թե դատարանում, նման աջակցության կարիք ունեք, հարցաքննությունից առաջ հնարավորինս շուտ հարցրեք այդ մասին հարցաքննողին:

Հոգեսոցիալական դատական ուղեկցություն

2017 թվականից ի վեր Գերմանիայի ողջ տարածքում հնարավորություն կա, որոշ դեպքերում, ողջ քրեական վարույթի ընթացքում, ստանալ մասնագիտական

ուղեկցություն և աջակցություն, այսպես կոչված՝ հոգեսոցիալական դատական ուղեկցություն: Հատկապես բռնության կամ սեռական հանցագործության զոհ դարձած երեխաներն ու դեռահասներն իրավունք ունենն ստանալ նման աջակցություն: Բայց նաև ծանր բռնության կամ սեռական հանցագործության զոհ դարձած չափահաս անձինք կարող են նման աջակցության կարիք ունենալ և ստանալ այն:

Հոգեսոցիալական դատական ուղեկցությունը տուժողների համար անվճար է, եթե դատարանն այն հաստատել է: Մնացած դեպքերում՝ Դուք կարող եք ստանալ հոգեսոցիալական դատական ուղեկցություն Ձեր ծախսերի հաշվին : Այդ հարցով կարող եք առանց վարանելու դիմել ոստիկանությանը կամ զոհերի աջակցության որևէ կենտրոնին: Նրանք կարող են Ձեզ մանրամասն տեղեկություններ տալ: Առցանց նույնպես կարող եք բազմաթիվ տեղեկություններ գտնել հոգեսոցիալական դատական ուղեկցության մասին www.hilfe-info.de կայքում:

Կարո՞ղ եմ արդյոք որպես համահայցվոր միանալ քրեական վարույթին:

Եթե Դուք որոշակի հանցանքների զոհ եք դարձել, ապա կարող եք վարույթի ժամանակ ներկայանալ որպես համահայցվոր: Այդ հանցանքների թվին են պատկանում օրինակ՝ բռնաբարությունը, սեքսուալ բռնությունը, սպանության փորձը, կամ այնպիսի հանցագործությունը, որը մոտիկ հարազատի սպանության պատճառ է դարձել: Նման դեպքերում Դուք ունեք հատուկ իրավունքներ: Ձեր փաստաբանը կարող է, օրինակ՝ Ձեզ համար, առանց հատուկ հիմնավորման, գործի նյութերին ծանոթանալու դիմում ներկայացնել: Բացի դրանից՝ Դուք սկզբունքորեն կարող եք, ի տարբերություն այլ վկաների, միշտ մասնակցել բոլոր դատական նիստերին:

Ո՞վ է վճարում իմ փաստաբանի ծախսերը:

Եթե Դուք օգտվում եք փաստաբանի ծառայություններից, ապա Ձեզ համար կարող են ծախսեր առաջանալ: Եթե ամբաստանյալը դատապարտվում է, ապա նա պարտավոր է ստանձնել Ձեր փաստաբանի ծախսերը: Սակայն բոլոր դատապարտյալները չեն, որ ի վիճակի են իսկապես վճարել ծախսերը: Այդ իսկ պատճառով՝ կարող է պատահել, որ Դուք նման դեպքում ստիպված լինեք ինքներդ վճարել այդ ծախսերը:

Բացառիկ դեպքերում կարող եք դատարանում դիմում ներկայացնել, որ Ձեզ տրամադրեն փաստաբան պետության հաշվին: Դա հնարավոր է օրինակ՝ ծանր բռնության կամ սեքսուալ հանցագործությունների դեպքում, կամ եթե հանցագործության պատճառով մահացել են մոտիկ հարազատներ, ինչպես օրինակ՝ երեխաներ, ծնողներ, ամուսինը կամ կինը: Նման դեպքերում էական չէ, թե Դուք ունեցվածք ունեք, թե ոչ:

Այլ դեպքերում նույնպես կարող եք դատարանին փաստաբանի ծախսերի համար ֆինանսական օժանդակություն ստանալու մասին դիմում ներկայացնել: Դա

կարող եք անել այն դեպքում, եթե Ձեր եկամուտը ցածր է և Դուք իրավունք ունեք վարույթին միանալ որպես համահայցվոր:

Վնասի փոխհատուցում և զոհի հատուցում

Ձեզ հանցագործության պատճառով վնա՞ս են հասցրել, կամ Դուք ցանկանում եք զոհի հատուցո՞ւմ ստանալ: Ցանկանո՞ւմ եք Ձեր պահանջը ներկայացնել հենց քրեական դատավարության ժամանակ: Դա որպես կանոն հնարավոր է (այսպես կոչված՝ադհեզիայի մեթոդով): Սակայն դրա համար պետք է հայց ներկայացնեք: Եթե ուզում եք փոխհատուցում ստանալ, ապա հնարվորինս շուտ՝ լավագույն դեպքում հանցագործության մասին հաղորդման հետ մեկտեղ, հայտնեք այդ մասին:

Իհարկե Դուք կարող եք փոխհատուցում կամ զոհի հատուցում պահանջել մեկ այլ վարույթով, այսինքն՝ ոչ թե քրեական, այլ քաղաքացիական դատարանի առաջ: Երկու դեպքում էլ կարող եք փաստաբանական խորհրդատվության համար ֆինանսական օգնություն ստանալու դիմում ներկայացնել դատարանին, եթե Ձեր եկամուտը շատ ցածր է:

Է՞լ ինչ իրավունքներ ունեմ ես:

Բռնության պատճառով ստացել եք առողջական վնասնե՞ր: Այդ դեպքում կարող եք, համաձայն Զոհերի հատուցման մասին օրենքի, պետական նպաստներ ստանալ, եթե օրինակ՝ խոսքը վերաբերում է բժշկական կամ հոգեթերապևտիկ բուժմանը, օժանդակ պարագաներին (օրինակ՝ քայլակ, անվասայլակ) կամ կենսաթոշակային նպաստին (օրինակ՝ եկամտի կորուստները փոխհատուցելու համար): Այդ հարցով կարող եք դիմել ոստիկանությանը հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու ժամանակ արդեն: Նրանք կարող են Ձեզ օգնել կապ հաստատել իրավասու մարմինների հետ:

Առանց նախապես դիմում ներկայացնելու՝ կարող եք դիմել վնասվածքաբանական ամբուլատոր կենտրոն, անհրաժեշտության դեպքում արագ և առանց բարդությունների հոգեսոցիալական աջակցություն ստանալու համար:

Եթե Դուք ահաբեկչական կամ ծայրահեղական հանցագործության զոհ եք դարձել, կարող եք ֆինանսական օժանդակության հայց ներկայացնել Արդարադատության դաշնային վարչություն: Այս կայքում կիմանաք ավելին նախապայմանների և ընթացակարգի մասին՝ www.bundesjustizamt.de (փնտրման բառը՝ Bürgerdienste→Härteleistungen (ծառայություններ քաղաքացիների համար→նպաստ ծանր դեպքերի համար)):

Որպես տնային բռնության զոհ Դուք որոշ դեպքերում այլ իրավունքներ էլ ունեք՝ համաձայն Բռնությունից պաշտպանության մասին օրենքի: Օրինակ՝ Դուք կարող եք առաջին ատյանի դատարանին (ընտանեկան դատարանին) հայց ներկայացնել այն մասին, որ հանցագործին արգելվի կապ հաստատել Ձեզ հետ: Հատուկ

դեպքերում՝ դատարանը կարող է Ձեզ թույլ տալ, որ բնակարանը, որտեղ մինչ այդ հանցագործի հետ միասին եք ապրել, այժմ օգտագործեք միայն Դուք: Անհրաժեշտ դիմումները կարող եք կամ գրավոր ներկայացնել առաջին ատյանի դատարան կամ Ձեր դիմումն այնտեղ գրանցել տալ: Պարտադիր չէ, որ դրա համար ունենաք փաստաբանական ներկայացուցչություն:

Պահանջներ կարող են լինել նաև դժբախտ պատահարների օրինական ապահովագրության դեմ: Սա կարող է լինել այնպիսի դեպքերում, եթե դուք օրինակ՝ իրականացրել եք Ձեր մասնագիտական գործունեությանը, ճամփորդել եք դպրոցական դասրանի կամ համալսարանական սեմինարների խմբի հետ կամ ցանկացել եք օգնել այլ մարդկանց դժբախտ պատահարների կամ արտակարգ իրավիճակների ժամանակ և այդ ընթացքում վնասվել եք: Ապահովագրական ընկերությունների և մասնագիտական ընկերությունների ցանկը կարող եք գտնել Գերմանիայի դժբախտ պատահարների օրինական ապահովագրության կայքում→www.dguv.de (→ Versicherung → Zuständigkeit (ապահովագրություն→իրավասություն)):

Ի՞նչ է հանցագործի և զոհի միջև հաշտեցումը:

Հանցագործի և զոհի միջև հաշտեցման գործընթացը, ի թիվս այլ բաների, պետք է հանցագործության զոհ դարձած անձանց օգնի հաղթահարել իրենց նկատմամբ տեղի ունեցած անարդարությունը: Ի տարբերություն սովորական քրեական դատավարության, այս դեպքում ավելի խորացված ձևով հանցագործը պետք է կոնկրետ և անմիջական զրույցի ձևով զբաղվի այն հարցով, թե իր կատարած հանցանքն ինչ վնասներ է հասցրել տուժողին: Այն կարող է վերաբերվել նյութական վնասներին, որը տուժողը կրել է հանցագործության պատճառով, կամ հոգեկան վնասներին, անձնական վիրավորանքներին և հանցագործության հետևանքով առաջացած վախերին: Այդ զրույցը սովորաբար տեղի է ունենում հատուկ մասնագետի միջնորդությամբ, բայց ցանկության դեպքում՝ նաևառանց անձնական հանդիպումների, այլ միայն միջնորդի միջոցով:

Հանցագործի և տուժողի միջև հաշտեցման ընթացակարգը երբեք տեղի չի ունենում հակառակ զոհի կամքի և իրականացվում է միայն այն դեպքում , եթե հանցագործը լրջորեն կամք է դրսվերում՝ ստանձնել հանցագործության պատասխանատվությունը: Համապատասխան դեպքերում հանցագործի և զոհի միջև հաշտեցման գործընթացը կարող է ծառայել զոհի ինքնորոշմամբ հակամարտության կարգավորմանը և իրավական խաղաղության վերահաստատմանը: Այդ իսկ պատճառով՝ հաճախ դատախազությունը կամ ոստիկանությունն իրենք են խթանում այս գործընթացին: Սակայն այն չի պատկանում հիմնական քրեական վարույթին և անց է կացվում քրեական վարույթից դուրս: Դրա համար կան հատուկ վայրեր և հաստատությունները, որտեղ աշխատում են մասնագիտացված միջնորդներ:

Այլ տեղեկություններ հանցագործի և տուժողի միջև հաշտեցման ընթացակարգի և

այն անցկացնող այնպիսի հաստատությունների վերաբերյալ, որոնք գտնվում են Ձեր մոտակայքում կարող եք գտնել համացանցում, օրինակ՝ www.toa-servicebuero.de/konfliktschlichter կամ www.bag-toa.de կայքերում։

Բրոշյուրներ և հղումներ

Զոհերի պաշտպանության մասին տեղեկություններ կարող եք գտնել www.hilfe-info.de կայքում:

Այլ օգտակար տեղեկություններ կգտնեք հետևյալ բրոշյուրներում՝

- «Ուղեցույց զոհերի համար»
- «Ես ունեմ իրավունքներ»
- «Ավելի շատ պաշտպանություն տնային բռնությունից»
- «Խորհրդատվության և դատավարության ծախսերի օժանդակություն» սույն կայքում՝ www.bmj.de/publikationen
- «Աջակցություն բռնության զոհերին» սույն կայքում՝ www.bmas.de/opferentschaedigung

Ստորին Սաքսոնիայում հանցագործության զոհերի համար կան մի քանի կոնտակտային և խորհրդատվական կենտրոններ՝

Անվճար աջակցությունը հասանելի է հանցագործության բոլոր զոհերին և նրանց ընտանիքներին : Ստորև թվարկված կոնտակտային և խորհրդատվական կենտրոններում աշխատում են հատուկ պատրաստված մասնագետներ: Անձնակազմի անդամները փորձ ունեն ձեր իրավիճակում գտնվող մարդկանց հետ: Նրանք լսում են ձեզ և օգնում: Կախված ձեր կարիքներից, նրանք նաև ձեզ կտրամադրեն լրացուցիչ օգնություն և տեղեկատվություն, օրինակ հետևյալ թեմաների վերաբերյալ.

- Տրավմաի թերապիա ամբուլատոր կլինիկաից արագ հոգեթերապևտիկ օգնություն ստանալ
- Բռնության պաշտպանության մասին օրենքի համաձայն դիմումներ կազմել
- Ընտանեկան և/կամ սեռական բռնության ապացույցների փաստաթղթեր ձեւակերպել `անկախ ոստիկանություն հաղորդումից (ProBeweis ցանց),
- Քրեական բողոք ներկայացնել
- քրեական դատավարության մասին տեղեկատվություն ստանալ
- վկայություն/ ցուցմունք տալ
- Օգնություն ուղեկցող վկաներին
- մասնավոր քրեական հետապնդման հետ առնչվող հարցեր
- վնասի կամ փոխհատուցման հետ կապված խնդիրների հետ առնչվող հարցեր (ընթացակարգ)
- ֆինանսական աջակցության հնարավորությունների հարցեր
- Հանցագործ-տուժող միջնորդություն ներկայացնել
- Աջակցություն լեզվական խոչընդոտների հետ կապված (ներառյալ ժեստերի լեզվի թարգմանությունը և այլն)

Ստորին Սաքսոնիայի զոհերի աջակցության հիմնադրամ զոհերի աջակցության 11 գրասենյակներով

Գրասենյակների առաջարկների և կոնտակտային տվյալների մասին տեղեկություններ կարելի է գտնել հետևյալ հասցեով՝

www.opferhilfe.niedersachsen.de

Հեռախոս՝ 0441/220-1111

Հոգեսոցիալական գործընթացի աջակցություն

Դատական օգնությունը հատկապես ինտենսիվ աջակցություն է քրեական դատավարության ընթացքում քրեական հանցագործություններից տուժածներին: Տեղեկատվությունը կարելի է գտնել հետևյալ հասցեով՝

www.justizportal.niedersachsen.de/prozessbegleitung

Հեռախոս՝ 0511/120-8728

Լրացուցիչ տեղեկություններ և աջակցություն կարող եք նաև ստանալ այստեղ՝

Զոհերի պաշտպանության Ստորին Սաքսոնիայի նահանգային հանձնակատարի գրասենյակ

Կենտրոնական խորհրդատվության և միջնորդության ծառայության և պետական ներկայացուցչի գրասենյակ կապվելու մասին տեղեկություններ կարելի է գտնել հետևյալ հասցեով՝

www.mj.niedersachsen.de/opferschutzbeauftragter

Հեռախոս՝ 0511/120-8737

WEISSER RING գրանցված ասոցիացիա . 41 մասնաճյուղերով Ստորին Սաքսոնիայում

Տեղեկատվություն WEISSEN RING-ի առաջարկների մասին և Ներքին Սաքսոնիայի մասնաճյուղերը կարելի է գտնել հետևյալ հասցեով՝

www.niedersachsen.weisser-ring.de

Զոհի հեռախոս՝ 116 006 (անվճար)

Ձեր իրավունքների և ձեզ առաջարկվող աջակցության վերաբերյալ Ստորին Սաքսոնիայի կոնտակտային և խորհրդատվական կենտրոնների ցանկը հասանելի է

հետեւյալ www.opferschutz-niedersachsen.de հղումով